

**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2014 Թ ԻՆՆ ԱՄՍՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014թ-ին մարզին է հատկացվել 3500 տոննա ազոտական պարարտանյութ և 1 800 000 լիտր դիզելային վառելանյութ: Առ 01.10.2014թ-ին 1 պարկը 6000 դրամով մարզ է ներկրվել 2526 տոննա ազոտական պարարտանյութ, մեկ լիտրը 350 դրամով 701830 լիտր դիզելային վառելանյութ: Ներկրումները շարունակվում են: Մարզի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն հայտ է ներկայացվել 350 տոննա գարնանացան գարու, 32 տոննա առվույտի և 50 տոննա կորնզանի սերմացուների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2014թ-ի փետրվարի 6-ի N149 –Ն որոշումով նշված հայտը բավարարվել է :

Հայտը ներկայացվել է համայնքների ղեկավարների կողմից ներկայացված գրավոր պահանջարկի հիման վրա: Սակայն ներկայացված պահանջարկից կանխիկ վճարով վերցվել է ընդամենը 44.7 տոննա գարնանացան գարու, 6.88 տոննա առվույտի սերմացուներ: Կորնզանի սերմացուի խմբաքանակը սպառվել է ամբողջությամբ: ՀՀ կառավարության որոշմամբ համայնքներին անվճար տրվելու է 305.3տ գարնանացան գարու, 25.22տ առվույտի և 6.455տ կորնզանի սերմացուներ:

Առաջին անգամ մեկ պարկը 7000 դրամով մարզ է ներկրվել 3.5 տոննա ֆոսֆորական և 7 տոննա կալիումական պարարտանյութեր: Մարզի համայնքներին անվճար տրվել է 226.32 կգ. ցինկֆոսֆիդ տեսակի մկնասպան թունանյութ, որով պայքար է տարվել 1886 հեկտար տարածությունների վրա: Մոնիթորինգ է կատարվել մարզի 26 համայնքների 4067 հա տարածքներում: Նշված տարածքներում պայքար կատարելու նպատակով անհրաժեշտ է 488 կգ ցինկֆոսֆիդ:

Մարզի 7 համայնքներում անվճար տրվել է 155 լ բուժանյութ, որով պայքար է տարվել 775 հա տարածքներում՝ օկնոգինա բազմակեր վնասատուի դեմ:

Մարզի տարածքում 2014 թ. գործում են 62 հակակարկտային կայաններ, որոնցից 42-ը ղեկավարվում են Արտաշավանի ռադիոլոկացիոն կենտրոնից, իսկ 20-ը տեղադրվել են անհատների և իրավաբանական անձանց կողմից: Այսպիսով, պաշտպանված տարածքները ներկայումս կազմում են մոտ 6200 հեկտար: 2014թ աշնանը տեղադրվել են 5 հակակարկտային կայաններ:

Մարտի 30-31-ին և հունիսի 26-ին մարզում ցրտահարվել և կարկտահարվել են 25 համայնքների բազմամյա տնկարկներ և ցանքատարածություններ: Աղետի պատճառով վնասները ընդգրկել են 1698.73 հա: Ցրտահարության պատճառով վնասները մեղմելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 100%-ով հատուցվել է հողի հարկը (շուրջ 10.57մլն ՀՀ դրամ), իսկ ջրի վարձավճարը՝ 50%-ով (շուրջ 20.795624 մլն ՀՀ դրամ), ինչպես նաև ցրտահարված համայնքներին 11.5 մլն ՀՀ դրամ արժեքով անվճար տրվել են ձմերուկի, սեխի, լոլիկի և վարունգի սերմեր:

ԳԲԱԾԻԳ- ով կատարվելու են արոտների ջրարբիացում և տեխնիկայի ձեռքբերում՝

Վ.Սասնաշեն համայնք – 108 045 000 ՀՀ դրամ

Վ.Բազմաբերդ համայնք –103 329 00 ՀՀ դրամ

Հնաբերդ համայնք – 159 889 200 ՀՀ դրամ

Ագարակավան համայնք –76 890 000 ՀՀ դրամ

ԻՖԱԴ – ով Արագածավան համայնքում <<Հայկական միրգ >> ծրագրով հիմնվելու է 17.9 հա բալի այգիներ, մոտ 25 000 000 ՀՀ դրամ արժեքով:

Մարզի համայնքներին “Ակբա կրեդիտ ագրիկոլ” բանկից առ 01.10.2014թ տրվել է 2791 հատ ցածր տոկոսադրույքով վարկեր՝ 3.171 միլիարդ դրամ ընդհանուր գումարով:

2014թ աշնանը մարզ է ներկրվել 92.6 տոննա աշնանացան ցորենի սերմացու, որից 2.6 տոննա էլիտա և 90 տոննա առաջին վերարտադրության:

**Մարզի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի
ցանքատարածությունները**

հեկտար

2013

2014

2014թ. 2013թ-ի

| | | | նկատմամբ, |
|--|--------------|--------------|-------------|
| Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր | 24423 | 26261 | 1838 |
| Տեխնիկական մշակաբույսեր | 24 | 22 | -2 |
| Կարտոֆիլ | 1605 | 1622 | 17 |
| Բանջարանոցային մշակաբույսեր | 1011 | 1035 | 24 |
| Բոստանային մշակաբույսեր | 173 | 182 | 9 |
| Կերային մշակաբույսեր | 8096 | 8869 | 773 |
| Ընդամենը ցանքային տարածությունը | 35332 | 37991 | 2659 |

2014թ մարզում համախառն բերքի տվյալները

| Մշակաբույս | Ցանքատարածություն /հա/ | Համախառն բերք /տ/ | Միջին բերք g/հա |
|-----------------------------|---------------------------|----------------------|--------------------|
| 1.Հացահատիկ և հացիկաընդեղեն | 26261 | 81645 | 31.1 |
| 2.Կարտոֆիլ | 1622 | 42000 | 258.9 |
| 3.Բանջար | 1035 | 36500 | 352.7 |
| 4.Բոստան | 182 | 7000 | 384.6 |
| 5.Պտուղ և հատապտուղ | 5826 | 71600 | 122.9 |
| 6.Խաղող | 1665 | 15000 | 90.1 |
| 7.Խոտ | --- | 165000 | --- |

Մարզի գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը
2014թ. (հունվարի 1-ի դրությամբ)

գլուխ

| | 2013 | 2014 | 2014թ. 2013թ-ի նկատմամբ |
|-----------------------------------|--------|--------|-------------------------|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 85161 | 85263 | +102 |
| Կովեր | 40326 | 40350 | +24 |
| Խոզեր | 10513 | 10521 | +8 |
| Ոչխարներ և այծեր | 95914 | 99212 | +3298 |
| Թռչուններ | 324755 | 336344 | +11589 |
| Մեղվաընտանիքներ | 15252 | 15727 | +475 |

Առ 01.10.2014թ. դրությամբ մարզում կատարվել է անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումներ 810000 գլխի նկատմամբ:

Ոռոգման ջրի վարձավճարների գանձումը՝ ըստ ԶՕԸ-երի, առ 09.10.2014թ.

| ԶՕԸ | Հասույթ /մլն դրամ/ | Գանձում /մլն դրամ/ | Գանձման % |
|------------------------|-----------------------|-----------------------|-------------|
| 1.Փարպի | 87.318 | 44.5 | 50.96 |
| 2.Աշտարակ | 118 | 68.3 | 57.9 |
| 3.Քասախ | 123 | 73.0 | 59.3 |
| 4.Շամիրամ | 158.257 | 78.933 | 49.8 |
| 5.Ամբերդ | 7.176 | 3.723 | 51.9 |
| 6.Ապարան-Արագած | 0.94 | 0.45 | 47.8 |
| 7.Թալին | 200 | 110 | 55.0 |
| Ընդամենը՝ | 694.691 | 378.226 | 54.4 |

Առ 01.10.2014թ. դրությամբ աշնանացան է կատարվել շուրջ 10000 հա, ակնկալվում է այն հասցնել մոտ 11800 հա-ի:

ՀՀ Արագածոտնի մարզում օգտակար հանածոները ներկայացված են հիմնականում տուֆերով, անդեզիտաբազալտներով, պեռլիտային ավազներով և խարամներով, իսկ մետաղական հանածոները՝ ոսկի-բազմամետաղով (Թուխմանուկի ոսկու հանքավայրը): Արագածոտնի մարզի հանքավայրերը շահագործվում են թվով 51 կազմակերպությունների կողմից: Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում:

„Հայանտառ, ՊՈԱԿ „Արագածոտնի անտառտնեսություն,, մասնաճյուղի հաշվեկշռում առկա է **10874.2** հա հողատարածք, որից անտառածածկ է **5215** հա-ը:

Գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝

Յու. Ազատյան